


ԹԵՄԱՏԻԿ ԱՄՓՈՓԱԳԻՐ

**Հակահետախուզության և
իրավապահության
գործառույթները
հետախուզության ոլորտում**



Թեմատիկ ամփոփագրի մասին

Այս ամփոփագիրը մշակվել է DCAF ժնկյան կենտրոնի Հետախուզության բարեփոխմանն աջակցության ծրագրի շրջանակներում:

Ամփոփագրում արտահայտված տեսակետները պատկանում են բացառապես հեղինակներին և չեն արտահայտում այն հաստատությունների տեսակետները, որոնց հղում է արվում սույն ամփոփագրում:

Նախուցում

Սույն ամփոփագրի բովանդակությունը կարող է մեջբերվել միայն DCAF ժնկյան կենտրոնի գրավոր համաձայնությամբ և աղբյուրի նշմամբ:

DCAF ժնկյան կենտրոնի մասին

DCAF ժնկյան կենտրոնը միջազգային հիմնադրամ է, որի առաքելությունն է օժանդակել միջազգային հանրությանը անվտանգության ոլորտի պատշաճ կառավարման և բարեփոխումների հարցում: DCAF-ը մշակում և խթանում է նորմեր և չափանիշներ, իրականացնում է քաղաքականության հետազոտություններ, վերհանում է դրական փորձը և մշակում է հանձնարարականներ անվտանգության ոլորտի ժողովրդավարական կառավարման խթանման նպատակով, ինչպես նաև տրամադրում է խորհրդատվական օժանդակություն և իրականացնում է գործնական աջակցության ծրագրեր:

ISBN: 978-92-9222-629-9

© 2020 DCAF – Անվտանգության ոլորտի կառավարման ժնկյան կենտրոն

ՀԱԿԱՅԵՏԱԽՈՒՇՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՀԵՏԱԽՈՒՇՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն ամփոփաթեթը ուսումնասիրում է հակահետախուզության և իրավապահության իրավասությունները հետախուզության ոլորտում: Այն դիտարկում է այս երկուսի միջև նմանությունները և տարբերությունները, ուսումնասիրում է, թե ինչպես են այդ իրավասությունները կիրառվում հետախուզական ծառայությունների կողմից, և վեր է հանում հետախուզական ծառայությունների կողմից իրավապահ և հակահետախուզական իրավասությունների կիրառման օպտիմալ մոդելի սահմանման հետ կապված հիմնական մարտահրավերները, ներառյալ անվտանգության տարբեր գործակալությունների միջև իրավասությունների հստակ բաժանումը, իրավապահ և հակահետախուզական մանդատներ ունեցող գործակալությունների իրավասությունների և գործառնությունների միջև համընկնումները և ավելորդ գործառնությունները, ներքին և արտաքին վերահսկողության համապարփակ համակարգերի ստեղծումը և գործակալությունների միջև համագործակցության գործունե շրջանակների ձևավորումը:

Սույն թեմատիկ ամփոփագիրը նախատեսված է օժանդակելու պետություններին իրենց հետախուզական ծառայությունների բարեփոխման գործընթացում: Ամփոփագիրը բաղկացած է հինգ մասից: Այն ուսումնասիրում է հակահետախուզության և իրավապահության միջև հարաբերությունները, ներառյալ դրանց գործառնական նմանությունները և տարբերությունները, այդ երկուսի միջև իրավասությունների փոխանցման գործընթացները և նախադատական հետաքննությունների կիրառումը: Այն եզրափակվում է հետախուզական գործակալությունների իրավասությունների, դերի և գործառնությունների՝ իրավապահ իրավասությունների առումով համապատասխան մոդելների վերաբերյալ դիտարկումներով:

1. Հակահետախուզությունը և իրավապահությունը

Ավանդաբար հակահետախուզությունը սահմանվում է որպես գործողություններ, որոնք ուղղված են արտասահմանյան ուժերի, կազմակերպությունների կամ անձանց, կամ դրանց գործակալների կողմից լուծեսությունը, դիվերսիոն գործողությունները կամ սպանությունները հայտնաբերելուն, կանխելուն, օգտագործելուն, կանխարգելելուն կամ դրանցից պաշտպանվելուն: Պարզ լեզվով՝ հակահետախուզությունը ներառում է գործողություններ, որոնք ուղղված են պաշտպանելու պետության շահերը այն ուժերից, որոնք ուզում են վնասել տվյալ պետությանը: Հակահետախուզության և իրավապահության միջև հիմնարար տարբերությունն այն է, որ առաջինն առնչվում է «ազգային անվտանգությանը», իսկ երկրորդը՝ հիմնականում «հասարակական կարգին», «անվտանգությանը»՝ հայտնաբերելով, կանխարգելելով, վերականգնելով կամ պատժելով այն անձանց, որոնք խախտում են տվյալ հասարակությունը կարգավորող կանոնները և նորմերը: Թեև իրավապահություն եզրույթն

ավանդաբար ներառում է ոստիկանությունը և ուղղիչ մարմինները (գործադիր ճյուղում), և դատարանները (դատական ճյուղում), սույն կյանքի նպատակներից ելնելով՝ այն կօգտագործվի միայն այնպիսի գործառնությունների տեսանկյունից, որոնք ուղղված են հանցագործ գործողությունների կանխարգելմանը և հայտնաբերմանը, հանցագործությունների հետաքննմանը և իրավախախտների ձերբակալմանը:

Հակահետախուզության և իրավապահության իրավասություններ ունեցող գործակալությունների միջև հարաբերությունը բարդ է և փոփոխական՝ կախված մի քանի հանգամանքներից, ներառյալ սպառնալիքի մակարդակը, իրավական համակարգը, գործակալությունների միջև համագործակցության մակարդակը, կառավարության քաղաքականությամբ սահմանված ցանկալի արդյունքները և գործակալությունների քանակն ու դրանց պարտականությունները: Ընդհանուր առմամբ գոյություն ունեն հակահետախուզական գործողությունների իրականացման երեք մոդելներ.

1. **Սահմանազատված մոդել.** հետախուզության ծառայության¹ միջոցով, որն աշխատում է իրավապահ մարմինների հետ համատեղ՝ վարույթի գործընթաց սկսելու համար: Այս մոդելի դեպքում հակահետախուզական իրավասություններ ունեցող հետախուզական գործակալությունները չունեն որևէ իրավապահ գործառնություն: Նրանք պետք է ունենան սահմանափակ հետաքննական իրավասություններ, որոնք կապված են ազգային անվտանգության հարցերի հետ, սակայն նրանց կողմից հավաքագրվող որևէ տեղեկություն չի կարող որպես ապացույց օգտագործվել դատարանում: Նրանք տրամադրում են հետախուզական տվյալներ (տեղեկատվություն), որոնց հիման վրա գործադիր կամ այլ պետական մարմիններ կարող են գործել, ինչպես նաև «ուղղորդումներ» ոստիկանության և դատախազների համար, որոնք կարող են կիրառվել հետազա (նախադատական) քրեական հետաքննությունների համար: Այս մոդելն ամենաշատն է համապատասխանում եվրաստլանտյան երկրներում ընդունված մոտեցումներին, և թույլ է տալիս հակահետախուզական իրավասություններ ունեցող հետախուզական գործակալություններին ունենալ առավելագույն պաշտպանություն տեղեկատվության հավաքագրման գաղտնի աղբյուրների և մեթոդների առումով (քանի որ դրա գործակալները և փաստաթղթերը չեն հայտնվում դատարանում):

¹ Հետախուզական ծառայությունները սահմանվում են որպես հատուկ պետական գործակալություններ, որոնք պատասխանատու են պետության և հասարակության անվտանգության համար կիրառելի հետախուզական տվյալների մշակման համար: Հետախուզական ծառայությունները այդպիսի տեղեկատվությունը մշակում են, որպեսզի օժանդակեն քաղաքական որոշում կայացնողներին. (i) սահմանել ազգային շահերը, (ii) մշակել ազգային անվտանգության և ռազմական ռազմավարություններ և քաղաքականություն, (iii) սահմանել զինված ուժերի և անվտանգության այլ հաստատությունների տեսլականը, առաքելությունը և ռազմավարությունները, (iv) պատրաստվել և արձագանքել ազգային ճգնաժամերին, (v) պատրաստ լինել և կանխել պետությանը և հասարակությանը սպառնացող վտանգներին: Լրացուցիչ մանրամասների համար տես՝ «ԱՌԲ Ամփոփաթեթ» (2015) Հետախուզական ծառայություններ. անվտանգության ոլորտի պատշաճ կառավարման գործընթացում դերերը և պարտականությունները: DCAF ժնկյան կենտրոն:

2. **Ինտեգրված մոդել.** դաշնային իրավապահ գործակալության միջոցով, որն ունի հատուկ հակահետախուզական ստորաբաժանում: Այս մոդելի դեպքում հետախուզական գործակալությունն ունի հետաքննական իրավասություններ, ներառյալ քրեական վարույթների համար ապացույցների հավաքագրման գործառնություն, սակայն չունի (ճնշիչ, հարկադրական) իրավասություններ՝ իրականացնելու ձերբակալություններ, հարցաքննություններ կամ կալանք: Հարկադիր կատարումը ոստիկանության, հատուկ իրավապահ մարմինների (օրինակ՝ հակակոռուպցիոն գործակալության) կամ դատախազության պատասխանատվությունն է: Գործակալությունը կարող է լինել անկախ պետական մարմին, նախարարության (ներքին գործերի նախարարության) կամ ոստիկանության մաս:
3. **Հիբրիդային մոդել.** հետախուզական ծառայություն, որն ունի ձերբակալման և վարույթ սկսելու իրավասություն: Այս մոդելի դեպքում հետախուզական ծառայությունն ունի իրավապահության և անվտանգության հետ կապված լիարժեք իրավասություններ (կանխարգելում, նախադատական քրեական հետաքննություններ, հսկողություն, խուզարկություն, հարցաքննություններ և ձերբակալում): Այն կարող է լինել առանձին հաստատություն կամ որևէ նախարարության, կամ ոստիկանության մաս: Սա, թերևս, ամենահակասական մոդելն է, քանի որ այն պարունակում է մեկ պետական մարմնում չափազանց մեծ իրավասությունների կենտրոնացման ռիսկ, ինչը կարող է հանգեցնել իշխանության չարաշահումների: Այսպիսի իրավասությունները որոշ չափով կարող են սահմանափակվել ավելի խիստ կարգավորումների, արտաքին վերահսկողական միջոցառումների միջոցով, ինչպես նաև քրեական իրավասությունների սահմանափակմամբ միայն ամենալուրջ դեպքերով, ինչպիսիք են, օրինակ, ահաբեկչությունը, դիվերսիան և լրտեսությունը:

Երբեմն պաշտպանության նախարարությունների ներքո գտնվող որոշակի գործակալություններ նույնպես ունենում են ռազմական ոլորտում լրտեսության հետ կապված խնդիրներով զբաղվելու իրավասություն: Այս առումով պետք է նշել, որ գոյություն չունի որևէ «իդեալական» մոդել. մոդելներից յուրաքանչյուրն ունի իր առավելությունները և թերությունները: Այդուհանդերձ, Եվրաստլանտյան երկրներում ամենալայնորեն կիրառվող մոդելը Սահմանազատված մոդելն է, որը հիմնվում է այն ընդունված ընկալման վրա, որ հետախուզական ծառայությունները չպետք է ունենան քրեական հետաքննություններ իրականացնելու, մարդկանց ձերբակալելու կամ կալանավորելու իրավասություն:

Ուշագրավ բացառություն է ԱՄՆ-ի դեպքը, որտեղ Հետաքննությունների դաշնային բյուրոն (ՀԴԲ/FBI) կիրառում է Ինտեգրված մոդելը, որը ներառում է և՛ իրավապահ, և՛ հակահետախուզական իրավասություններ: Եվրաստլանտյան երկրներում մի քանի հետախուզական գործակալություններ, ինչպիսիք են Լեհաստանի ABW գործակալությունը, Դանիայի PET գործակալությունը և Իռլանդիայի An Garda Síochána-ն, նույնպես կիրառում են Ինտեգրված մոդելը, որը ներառում է հակահետախուզական իրավասություններ, ինչպես նաև որոշակի օրինական իրավասություններ իրավապահ ոլորտում: Եվրաստլանտյան երկրներից դուրս մի քանի երկրների հետախուզական ծառայությունները, ինչպես օրինակ՝ Բրազիլիայի DPF ծառայությունը և Մալազիայի MSB ծառայությունը նույնպես կիրառում են նմանատիպ մոդել:

Սակայն ընդհանուր առմամբ հետախուզական ծառայությունների մեծ մասը չունեն քրեական հետաքննություններ անցկացնելու իրավասություններ. փոխարենը դրանք տրված են ոստիկանությանը, հատուկ իրավապահ մարմիններին (որոնք մասնագիտացած են բարդ հանցավորության և/կամ կոռուպցիայի ոլորտներում) կամ դատախազությանը: Կան ավելի փոքրաթիվ օրինակներ, երբ հետախուզական գործակալություններն ունեն ձեռքարկվման և կալանավորման լայն իրավասություններ, և այդ օրինակների մեծ մասը եվրաստլանտյան տարածաշրջանից դուրս են: Այդուհանդերձ, քանի որ ազգային անվտանգության պաշտպանության և հանրային անվտանգության պահպանության բարդ խնդիրները գնալով փոխկապակցվում են, գուցե անհրաժեշտ լինի վերանայել հակահետախուզության և իրավապահության միջև ավանդական սահմանները, հատկապես այն երկրներում, որտեղ առկա է հակամարտություն, կամ այն երկրներում, որոնք իրականացնում են հետախուզության ոլորտի բարեփոխումներ:

2. Հակահետախուզության և իրավապահության միջև գործառնական նմանությունները և տարբերությունները

Հակահետախուզության իրավասություններ ունեցող գործակալությունները և իրավապահ իրավասություններ ունեցող գործակալությունները երկուսն էլ աշխատում են անվտանգություն ապահովելու համար: Որոշ դեպքերում նրանց շահերը կարող են համընկնել, իսկ այլ դեպքերում՝ տարբերվել: Նրանց նպատակները, իրավասությունները, առաջնահերթությունները, «ժամանակի զգացողությունը», չափանիշները և ընթացակարգերը, ինչպես նաև ինստիտուցիոնալ մշակույթը կարող են զգալիորեն տարբեր լինել: Մինչև հակահետախուզական իրավասություններն օգտագործվում են «ազգային անվտանգության» պաշտպանության ավելի լայն նպատակի համար, իրավապահ իրավասություններ ունեցող գործակալությունները առաջին հերթին պատասխանատու են կասկածվող հանցագործությունների դեպքերի հետաքննության, օրենքի գերակայությունն ապահովելու համար պահանջվող տեղեկատվությունը համապատասխան մարմիններին տրամադրելու, ինչպես նաև հանրային կարգն ու անվտանգությունը ապահովելու համար: Որպես այդպիսին՝ հակահետախուզական իրավասություններ ունեցող գործակալությունները մեծամասամբ հիմնվում են նախնական կանխարգելման և կանխման վրա, իսկ իրավապահ իրավասություններ ունեցող գործակալությունները հիմնականում կենտրոնանում են ապացույցների հետահայաց հավաքագրման վրա:

Շատ երկրներ չեն սահմանում «ազգային անվտանգությունը», կամ սահմանում են այն ընդհանրական և վերացական տերմիններով: Արդյունքում, հատկապես խաղաղ ժամանակներում շատ դժվար է լինում հետաքննել նույնիսկ այնպիսի հանցագործությունները, որոնք ավանդաբար դիտարկվում են որպես սպառնալիք «ազգային անվտանգությանը», ինչպիսիք են, օրինակ, դավաճանությունը, խռովությունները, դիվերսիաները կամ լրտեսությունը: Ի տարբերություն սրա՝ քրեական իրավունքի պարտադրումը համեմատաբար ավելի հեշտ է: Հակահետախուզական իրավասություններ ունեցող գործակալությունները հիմնվում են գաղտնիության և իրենց աղբյուրների պաշտպանության վրա, իսկ իրավապահ իրավասություններով գործակալություններն ավելի թափանցիկ են և պարտավոր են օրինական ընթացակարգերի ընթացքում բացահայտել հետաքննության հետ կապված տեղեկատվությունը, եթե այն կարևոր է հետաքննության համար:

Հակահետախուզական իրավասություններ ունեցող գործակալությունների կողմից հավաքագրված տեղեկատվությունը կարող է օգտագործվել դատարանում, եթե տվյալ երկրի օրենսդրական համակարգը դա թույլ է տալիս: Այսպիսի դեպքերում դատարանների համար հիմնական խնդիրն այն է, թե արդյոք այդ տեղեկատվությունը հավաքագրվել է օրինական եղանակով և կապված չէ բուն հավաքագրման միջոցների հետ: Սակայն գործնականում հակահետախուզական իրավասություններ ունեցող գործակալությունների կողմից հավաքագրված տեղեկատվությունը հնարավոր է որ երբեք նախատեսված չի եղել դատական գործընթացի ընթացքում կիրառվելու համար, այլ նախատեսված է եղել որպես ազգային անվտանգության սպառնալիք ընկալվող որևէ իրավիճակի կանխման կամ պարզապես մոնիթորինգի համար:

Ահաբեկչությունը, թերևս, ամենատեսանելի օրինակն է անվտանգության այնպիսի սպառնալիքի, որն ունի հնարավոր հետևանքներ թե՛ պետական, թե՛ անհատական մակարդակներում, ինչը նշանակում է, որ հակահետախուզական իրավասություններ ունեցող և իրավապահ իրավասություններ ունեցող գործակալությունները հաճախ երկուսն էլ ներգրավվում են այդպիսի հետաքննություններում: Հակահետախուզական իրավասություններ ունեցող գործակալությունները կձգտեն կանխել ահաբեկչական հարձակումները սպառնալիքի ուղղվածության, բնույթի և ընդհանուր մակարդակի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու միջոցով: Ի տարբերություն սրա՝ իրավապահ իրավասություններ ունեցող գործակալություններ սովորաբար կներգրավվեն միայն այն բանից հետո, երբ առկա լինեն բավարար հիմքեր քրեական վարույթ սկսելու համար, այսինքն՝ նրանք սովորաբար կարող են սահմանափակ դեր ունենալ հարձակումների կանխարգելման գործում:

Անկախ այդ գործակալությունների միջև ինստիտուցիոնալ հարաբերություններից՝ երբեմն բարդ հանցագործությունները և անվտանգության հետ կապված այլ հանցագործությունները պահանջում են հակահետախուզական և իրավապահ իրավասություններ ունեցող գործակալությունների միջև համակարգված մոտեցում: Իրավապահ իրավասություններ ունեցող գործակալությունները գործում են սահմանված տարածքում (քաղաք, նահանգ) և իրենց գործունեության ընթացքում պետք է համապատասխանեն հստակ դատավարական չափանիշների:

Ավանդաբար, հակահետախուզական իրավասություններ ունեցող գործակալությունները ավելի մեծ ազատություն ունեն տեղեկատվության հավաքագրման հարցում թե՛ երկրի ներսում, թե՛ արտասահմանում: Վերջին տարիներին, սակայն, այս միտումը փոխվել է, ինչի օրինակ է հանդիսանում Գերմանիայի Սահմանադրական դատարանի 2020 թվականի մայիսի 19-ի որոշումը, որով հակասահմանադրական էր հայտարարվել Գերմանիայի արտաքին հետախուզության ծառայության (BND) կողմից տեղեկատվության հավաքագրումը արտասահմանում: Թեև չափանիշները կարող են տարբեր լինել, երկու տեսակի գործակալություններն էլ ունեն (հատուկ) իրավասություններ, որոնք պետք է համապատասխանեն օրենսդրական կարգավորումներին և օրենքի շրջանակներում հարգեն անհատական իրավունքներն ու ազատությունները: Ընդհանուր առմամբ, հակահետախուզական իրավասություններ ունեցող և իրավապահ իրավասություններ ունեցող գործակալությունների միջև կարելի է առանձնացնել հետևյալ գործառնական տարբերությունները.

- **Կիրառվող տեխնիկաների բացահայտում.** իրավապահության բնույթից ելնելով՝ իրավապահ իրավասություններ ունեցող գործակալությունները պարտավոր են բացահայտել իրենց ապացույցները (օրինակ՝ հետաքննությունների ժամանակ), ինչպես նաև այդ ապացույցների հավաքագրման համար կիրառված միջոցները: Հակահետախուզական իրավասություններ ունեցող գործակալությունների դեպքում դա միշտ չէ, որ այդպես է, քանի որ դրանց թիրախները հաճախ հովանավորվում են պետությունների կողմից և ընդհանուր առմամբ շատ ավելի բարդ են, քան հանցավոր ցանցերը: Սա հատկապես կիրառելի է այն դեպքերում, երբ հակահետախուզությունն օգտագործվում է արտասահմանյան հետախուզական ցանցեր մուտք գործելու համար: Եթե նման տեխնիկաները բացահայտվեն քրեական հետաքննությունների ժամանակ, աղբյուրները, հասցեները, հանդիպման վայրերը և օպերատիվ աշխատակիցների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև տեղեկատվության հավաքագրման մեթոդները, օրինակ՝ թվային գաղտնալսման տեխնիկաները, կարող են վտանգվել: Սա հատկապես խնդրահարույց է այն դեպքերում, երբ տեղեկատվության սկզբնաղբյուրը արտասահմանյան ծառայությունն է: Հետաքննությունը վտանգելուց բացի, այսպիսի բացահայտումը կարող է վնաս հասցնել երկկողմանի հարաբերություններին և հանգեցնել համագործակցության և տեղեկատվության փոխանակման նվազման:
- **Անվտանգության ստուգումներ.** հակահետախուզական իրավասություններ ունեցող գործակալությունների աշխատակիցները սովորաբար ենթարկվում են անվտանգության ստուգումների և, հետևաբար, ծանոթ են լինում համապարփակ անվտանգության ստուգումների գործընթացներին: Ընդհանուր առմամբ, իրավապահ իրավասություններ ունեցող գործակալությունների աշխատակիցները չեն անցնում անվտանգության այսպիսի ստուգումներ:
- **Հաղորդակցության անվտանգություն.** իրավապահության բնույթից ելնելով՝ իրավապահ իրավասություններ ունեցող գործակալությունները սովորաբար գործում են հաղորդակցության անվտանգության շատ ավելի ցածր մակարդակում, քան հակահետախուզական իրավասություններ ունեցող գործակալությունները, ինչը նրանց խոցելի է դարձնում թշնամական պետությունների և դերակատարների համար: Սա վերաբերում է թե՛ սպաներին, թե՛ գլխամասային գրասենյակների հաղորդակցությանը:
- **Տարբեր միջոցներ և մեթոդներ.** հակահետախուզության օպերատիվ գործունեության հիմքում ընկած է մարդկային ռեսուրսների հավաքագրումը և նրանց հետ աշխատանքը, տեղեկատվության հավաքագրման ներխուժիչ մեթոդների կիրառումը, ինչպես նաև SIGINT սարքերի և ենթակառուցվածքների միջոցով հետախուզական տվյալների հավաքագրումը: Ի տարբերություն սրա՝ իրավապահությունը հիմնականում հիմնված է քրեական հետաքննությունների անցկացման վրա՝ քրեական ընթացակարգերին համապատասխան և քրեական օրենսդրության շրջանակներում: HUMINT մեթոդների ցանկացած կիրառում իրավապահ իրավասություններ ունեցող գործակալության կողմից պետք է իրականացվի Քրեական օրենսգրքին համապատասխան՝ ապահովելու համար, որ ստացված նյութերը և տվյալները որպես ապացույց կարող են ընդունվել դատարանում:

Իրավապահ իրավասություններ ունեցող գործակալությունները կիրառում են նման միջոցներ, սակայն տարբեր պայմաններում և տարբեր ռեժիմներով: Տեղեկատվության հավաքագրման ներխուժիչ մեթոդների կիրառման նպատակը, ինչպես, օրինակ, հաղորդակցությունների գաղտնալուծումը, իրավապահ իրավասություններ ունեցող գործակալությունների դեպքում այն է, որ հավաքագրվեն ապացույցներ՝ ցույց տալու համար, թե հնարավոր է, որ տեղի է ունեցել քրեական հանցագործություն: Այն կիրառելի է միայն այն դեպքերում, երբ ողջամիտ հիմքեր կան կասկածելու համար, որ տեղի է ունեցել քրեական հանցագործություն: Հակահետախուզության դեպքում նման միջոցների կիրառման նպատակը ազգային անվտանգության շահերից ելնող տեղեկատվության հավաքագրումը և կառավարությանը տրամադրումն է, որպեսզի այն կարողանա կայացնել տեղեկացված որոշումներ կամ իրականացնել այդ սպառնալիքներին հակազդելուն ուղղված գործողություններ:

- **Տարբեր հաստատումներ.** հակահետախուզական և իրավապահ իրավասություններ ունեցող գործակալությունների կողմից կիրառվող միջոցների և մեթոդների տարբերությունը երբեմն հանգեցնում է հաստատման տարբեր ընթացակարգերի օգտագործմանը: Սակայն տեղեկատվության հավաքագրման ներխուժիչ մեթոդների կիրառման դեպքում եվրաստանյան տարածաշրջանում դատարանի կողմից տրված հաստատումը մնում է նորմ թե՛ հակահետախուզական իրավասություններ ունեցող, թե՛ իրավապահ իրավասություններ ունեցող գործակալությունների դեպքում: Իրավապահ իրավասություններ ունեցող գործակալությունները պահանջում են «հաստատում երկու մակարդակով»՝ դատախազից և դատարանից: Հակահետախուզական իրավասություններ ունեցող գործակալությունները սովորաբար պահանջում են հաստատում բարձրաստիճան դատարանի կողմից (Բարձրագույն դատարան, վերաքննիչ դատարան կամ հատուկ դատարան): Դեպքերի մեծ մասում չի պահանջվում դատախազության ներգրավվածություն (ԵՄ որոշ երկրներում առկա են ուշագրավ բացառություններ, երբ գլխավոր դատախազը պետք է հաստատում տրամադրի օրդերի համար՝ նախքան այն Բարձրագույն դատարանի հաստատմանն ուղարկելը): Որոշ եվրաստանյան երկրներում, ներառյալ ՄԹ, իրավապահ կամ հակահետախուզական գործակալությունների բարձրաստիճան պաշտոնյաները կամ նախարարները կարող են տալ ներխուժիչ հսկողական միջոցների կիրառման թույլտվություն: Ավելին, քանի որ հակահետախուզական գործունեությունը հաճախ ներառում է արտասահմանյան երկրների գործակալներին և հետախուզական գործակալություններին, դատական հաստատման անհրաժեշտության համար կարող են լինել տարբեր իրավական չափանիշներ այն դեպքերում, երբ գործակալությունները հետաքննում են իրենց երկրի քաղաքացիների հետ կապված դեպքեր:

3. Հակահետախուզական իրավասությունների փոխանցումը իրավապահ իրավասություններ ունեցող գործակալություններին

Այն դեպքերում, երբ հակահետախուզական և իրավապահ իրավասություններ ունեցող գործակալությունների միջև առկա է պատասխանատվությունների տարանջատում, սովորաբար լինում է մի կետ, երբ հակահետախուզական գործողություններ իրականացնող գործակալությունները հետաքննությունը փոխանցում են իրավապահ մարմիններին: Այսպիսի փոխանցման նպատակը սովորաբար այն է, որ այդ մարմինները սկսեն վարույթ և հնարավորության դեպքում հավաքագրեն իրենց սեփական ապացույցները, որպեսզի պաշտպանեն հակահետախուզության աղբյուրները, աշխատակիցներին և օգտագործված մեթոդները: Շատ բան կախված է տվյալ երկրի իրավական համակարգից և բացահայտման պահանջներից: Այն, թե երբ, ինչպես և ինչքանով է հետախուզական գործակալությունը հաստատում իրավասության փոխանցումը ոստիկանությանը կամ հակակոռուպցիոն մարմին, կախված կլինի նրանից, թե ինչ դեր է սահմանված տվյալ հետախուզական գործակալության համար:

Տարբեր երկրներում այս դերերը տարբեր են: Սակայն ընդհանուր գործող չափանիշն այն է, որ հետախուզական գործակալություններին վերաբերող նորմերը պետք է լինեն ինչքան հնարավոր է հստակ և պարզ, որպեսզի հստակորեն սահմանվեն այն առաջադրանքները, որոնցում այդ ծառայությունները կարող են օրինական կերպով ներգրավվել: Հստակ սահմանված դերերի և պատասխանատվությունների պարագայում հետախուզական գործակալությունների կողմից իրավապահ մարմիններին իրավասությունների փոխանցման ժամանակ անորոշությունները և թյուրըմբռնումները կարող են զգալիորեն նվազեցվել:

Ե՞րբ. իրավասությունների փոխանցումը տեղի կունենա այն պահին, երբ անհրաժեշտ կլինի հստակ գործողություն, ինչպես, օրինակ, որևէ անհատի կամ խմբի նկատմամբ քրեական վարույթի սկսելը, և այն դեպքերում, երբ տվյալ գործողությունը կպահանջի իրավապահ իրավասություններ ունեցող գործակալության, օրինակ՝ ոստիկանության, օրինական միջամտությունը: Սա ավելի լավ կարելի է նկարագրել ոչ թե որպես իրավասության փոխանցում, այլ հրամանատարության փոխանցում: Սա ավելի նման է «ոսկի-արծաթ-բրոնզ» հրամանատարական կառուցվածքին, որի դեպքում ընդհանուր հրամանատարությունը կարող է փոփոխվել, սակայն երկու գործակալություններն էլ շարունակում են ներգրավված մնալ: Օրինակ՝ Իսպանիայում Բարձրագույն դատարանի դատավորն ունի վերահսկողություն CNI նկատմամբ և կայացնում է որոշում տվյալ դեպքը իրավապահ իրավասություն ունեցող մարմին փոխանցելու վերաբերյալ՝ CNI պահանջի հիման վրա, կամ սեփական գնահատման արդյունքում:

Ինչպե՞ս. հրամանատարությունը փոխանցելու վերաբերյալ որոշումը սովորաբար կայացվում է հակահետախուզական գործողության մեջ ներգրավված բարձրաստիճան սպայի կողմից, կամ քրեական գործունեության վերաբերյալ զեկուցելու իրավական պահանջից ելնելով: Հակահետախուզական գործողությունն իրականացնող գործակալությունը սկսում է հետաքննություն և որոշում է, թե որ պահին է անհրաժեշտ իրավապահ գործողություն: Օրինակ՝ հնարավոր է, որ հակահետախուզական գործողությունը հետաքննում է արտասահմանյան երկրի կողմից պետության գաղտնիքները ստանալու

նպատակով տվյալ պետության կարևոր ենթակառուցվածքների մեջ ներ-
խուժելու փորձերը:

Հետաքննության արդյունքում պարզվում է, որ պետական մարմնի
աշխատակիցներից մեկը տեղեկատվություն է տրամադրել արտասահմանյան
պետությանը: Հակահետախուզական գործողությունն իրականացնող հետա-
խուզական գործակալությունը կուսումնասիրի տվյալ անձին: Եթե հայտ-
նաբերվեն լրտեսության *prima facie* ապացույցներ, նրանք տվյալ գործը
կփոխանցեն իրավապահ մարմիններին, որպեսզի վերջիններս իրակա-
նացնեն լրացուցիչ հետաքննություն և անհրաժեշտության դեպքում սկսեն
վարույթ: Հետախուզական գործակալությունը կշարունակի հետաքննել
տվյալ դեպքը՝ իրավապահ մարմիններին օժանդակելու, ինչպես նաև տվյալ
արտասահմանյան երկրի կողմից կիրառվող մեթոդների մասին լրացուցիչ
հետախուզական տվյալներ հավաքագրելու նպատակով: Թեև հետախուզական
գործակալությունը չի դադարեցնի իր կողմից կատարվող հետաքննությունը,
այն իրավապահ մարմիններին կներկայացնի միայն այն տեղեկատվությունը,
որը կապված է տվյալ դեպքի հետ:

Այն մոդելի դեպքում, երբ հետախուզական գործակալություններն ունեն
քրեական հետաքննություններ անցկացնելու, մարդկանց ձերբակալելու և
կալանավորելու իրավապահ գործառնություններ (սույն ամփոփաթեթում ներ-
կայացված է որպես Հիբրիդային մոդել), առկա են երկու հիմնական մտա-
հոգություններ.

- **Առաջին՝** ելնելով «ազգային անվտանգության» չսահմանված և անորոշ եռբյու-
նից՝ նախկին փորձը ցույց է տալիս, որ հակահետախուզական իրավասություն-
ներ ունեցող գործակալությունները հատկապես խոցելի են իշխանության
չարաշահումների տեսանկյունից: Ուստի այդ գործակալություններին իրա-
վապահ գործառնություններ տալու պարագայում պետք իրականացվեն լայնածավալ
և համապարփակ վերահսկողություն, ստուգման և հսկողության միջոցներ
այդպիսի ռիսկերը նվազեցնելու նպատակով:
- **Երկրորդ՝** առկա է արդարացված մտահոգություն, որ իրավապահ իրավա-
սությունների և գաղտնի (հատուկ) իրավասությունների միավորումը պա-
րունակում է մեկ գործակալության շրջանակներում իշխանության գեր-
կենտրոնացման հնարավորություն՝ այդպիսով ստեղծելով ամենակարող մի
հաստատություն: Ամեն ինչի իրավասություն ունեցող պետական անվտան-
գության ծառայությունը կարող է հավասարակշռությունից հանել ինստի-
տուցիոնալ հարաբերությունները նույնիսկ կայուն ժողովրդավարական երկրնե-
րում: Հավասարապես մտահոգիչ է այն փաստը, որ հակահետախուզական
իրավասություններ ունեցող գործակալությունները սովորաբար ընկնում են գոր-
ծադիր (նախագահի) ուղղակի վերահսկողության ներքո, ինչը կարող է ազդե-
ցություն ունենալ նախադատական հետաքննությունների օբյեկտիվության և
անկախության վերաբերյալ հանրային ընկալումների վրա:

4. Նախադատական հետաքննությունների իրականացումը

Արտասովոր չէ, որ հետախուզական գործակալությունները դերակատարություն ունենան ծանր (բարդ) հանցագործությունների կամ ազգային անվտանգության դեմ ուղղված այնպիսի հանցագործությունների դեմ պայքարի գործում, որոնք դժվար է բացահայտել: ՄԹ-ի Անվտանգության ծառայությունը (MI5) ժամանակին ակտիվորեն աջակցել է ոստիկանությանը և իրավապահ մարմիններին «լուրջ հանցագործությունների» հետ կապված հետաքննություններում: Բացի դրանից՝ կան մոդելներ, որոնց դեպքում հակահետախուզական իրավասություններ ունեցող գործակալություններն ունեն ուղղակի իրավական իրավասություններ նախադատական քրեական հետաքննությունների իրականացման համար: Արժե նշել, որ գործնական մոտեցումները հիմնականում տարբերվում են՝ կախված տվյալ հետախուզական գործակալության համար հասանելի միջոցների շրջանակից: Օրինակ՝ Պորտուգալիայի ազգային հետախուզական ծառայությունը՝ Անվտանգության հետախուզական ծառայությունը (SIS), չի կարող կիրառել տվյալների հավաքագրման ներխուժիչ մեթոդներ, ինչպես, օրինակ, հաղորդակցությունների գաղտնալուծումը: Այս իրավասությունը պատկանում է բացառապես քրեական ոստիկանությանը (Policia Judiciaria): Առկա են մի շարք մտահոգություններ առ այն, թե ինչ աստիճանի նախադատական հետաքննության իրավասություններ են տրվում հակահետախուզական իրավասություններ ունեցող գործակալություններին, ներառյալ.

- Իրավասությունների համընկնումներ կամ անհամապատասխանություններ իրավապահ իրավասություններ ունեցող այլ գործակալությունների հետ: Կարող են խնդիրներ ծագել, եթե երկուսն էլ ներգրավված են նույն գործի կամ փոխկապակցված հետաքննության մեջ, ինչը կարող է հանգեցնել նրան, որ երկու գործակալությունների միջև կարող են ծագել կոնֆլիկտներ իրավասությունների կամ լիազորությունների շուրջ:
- Ոչ պատշաճ մեթոդներ օգտագործելու ռիսկ (օրինակ՝ գաղտնի հետախուզական տվյալների հավաքագրում նախադատական ապացույցների հավաքագրման համար): Օրինակ՝ քրեական հետաքննության նպատակներով սովորաբար անընդունելի է հակահետախուզական ներխուժիչ կամ այլ գաղտնի մեթոդների կիրառումը: Բացի դրանից՝ հակահետախուզական իրավասություններ ունեցող գործակալությունները կարող են ճնշումների ենթարկվել դատական գործընթացների ընթացքում իրենց աղբյուրների բացահայտման համար՝ դրանով իսկ վտանգելով ընթացիկ հետաքննության ընթացքը:
- Սահմանադրական քաղաքացիական ազատությունների, իրավունքների և հանրային քաղաքականության վրա հնարավոր ազդեցությունները, որոնք կարող են ի հայտ գալ հետախուզական գործակալությանը իրավապահ գործառնություններ տալու արդյունքում:

Քրեական դատավարության թափանցիկության ապահովումը, որը հանդիսանում է իրավապահ իրավասություններ ունեցող գործակալությունների կողմից իրականացված հետաքննությունների արդյունք, ունի նաև այն առավելությունը, որ այն վստահեցնում է լայն հասարակությանը, որ կառավարությունը չի կիրառում գաղտնի մեթոդներ և չի օգտագործում հետախուզական ծառայություններին քաղաքական ընդդիմադիրներին հետապնդելու

Նպատակով: Թեև վարույթ սկսելու նպատակով հակահետախուզական իրավասություններ ունեցող գործակալությունները գործը հանձնում են իրավապահ մարմին, նրանք սովորաբար շարունակում են ներգրավված մնալ նախադատական հետաքննության իրականացմանն աջակցելու գործում: Սակայն նրանց ներգրավվածությունը լինում է սահմանափակ: Նման ներգրավվածության մակարդակը կախված կլինի տվյալ երկրի օրենքներից, տվյալ գործի բնույթից և մի շարք այլ հանգամանքներից, ինչպիսիք է հետախուզական գործակալության աշխատակիցների՝ անանուն կերպով ապացույցներ ներկայացնելու կարողությունը: Բացի դրանից՝ հակահետախուզական իրավասություններ ունեցող ցանկացած գործակալության դերը նախադատական հետաքննության գործընթացում պետք է հստակորեն կապված և սահմանափակված լինի այն առաջադրանքներով, որոնց իրականացման մանդատը տրված է տվյալ գործակալությանը:

Տվյալ գործակալության առաջադրանքները կարող են լրացուցիչ սահմանափակվել հանցագործությունների զգալիորեն նեղ շրջանակներով, ինչպիսիք են ահաբեկչությունը և լրտեսությունը: Մեկ այլ տարբերակ է հետախուզական գործակալության գործառնությունների խիստ սահմանափակումը օժանդակ դերակատարությամբ, որի դեպքում այն իրականացնում է նախադատական հետաքննություններ իրավապահ իրավասություններ ունեցող այլ գործակալությունների (ոստիկանություն և/կամ հակակոռուպցիոն գործակալություն) առաջնորդությամբ: Օրինակ՝ հակահետախուզական իրավասություններ ունեցող գործակալության գործառնությունները կարող են սահմանափակվել այլ իրավապահ մարմիններին հետաքննությունների իրականացման համար անհրաժեշտ կարևոր տեղեկատվության տրամադրմամբ: Սա թույլ կտա հակահետախուզական իրավասություններ ունեցող գործակալությանը ավելի լավ պաշտպանել իր գործակալներին, աղբյուրները և մեթոդները, քանի որ քրեական գործերի վարույթի ընթացքում առկա է ռիսկ, որ այս կարևորագույն տեղեկատվությունը կարող է բացահայտվել:

5. Ամփոփում

Ինչպես նշվել է սույն ամփոփագրի սկզբում, առկա են իրավապահ իրավասությունների տեսանկյունից հետախուզական գործակալությունների իրավասությունների, դերերի և գործառնությունների սահմանման երեք հիմնական մոդելներ: Այդ մոդելները բնութագրվում են հետևյալ կերպով.

- Սահմանազատված մոդել. հետախուզության ծառայություն, որն աշխատում է իրավապահ մարմինների հետ համատեղ՝ քրեական վարույթ սկսելու համար:
- Ինտեգրված մոդել. դաշնային իրավապահ գործակալություն, որն ունի հատուկ հակահետախուզական ստորաբաժանում:
- Հիբրիդային մոդել. հետախուզական ծառայություն, որն ունի ձերբակալման և քրեական վարույթ իրականացնելու իրավասություն:

Հակահետախուզության և իրավապահության համար օպտիմալ մոդելի սահմանման ցանկացած փորձ պետք է դիտարկվի անվտանգության համատեքստում: Անկախ այն բանից, թե որ մոդելն է ընտրում անցումային փուլում գտնվող երկիրը, այն կունենա որոշակի առավելություններ և թերություններ: Հետևաբար, որոշումը պետք է հիմնված լինի առկա հակահետախուզական

սպառնալիքների գնահատման, ինչպես նաև վերահսկողության և հսկողության հետ կապված խնդիրների դիտարկման վրա:

Ինչպես արդեն նշվել է, հակահետախուզության և իրավապահության համար մոդելի մշակման հետ կապված հիմնական մարտահրավերները կլինեն իրավասությունների հստակ տարանջատումը, համընկնումներից և ավելորդություններից խուսափելը և գործակալությունների միջև համագործակցության համար գործուն շրջանակի ձևավորումը: Եվրաստլանտյան տարածաշրջանի երկրների մեծ մասում հակահետախուզական իրավասություններ ունեցող գործակալությունների և իրավապահ իրավասություններ ունեցող գործակալությունների աշխատանքը հակահետախուզության ոլորտում ուղղորդված է եղել հակահետախուզական սպառնալիքներով և սահմանվել է համապատասխան ազգային օրենսդրությամբ: Այդուհանդերձ, Սահմանազատված մոդելը ամենալայն օգտագործվող մոդելն է՝ հիմնվելով ընդունված տեսակետի վրա, որ հետախուզական ծառայությունները չպետք է ունենան քրեական հետաքննություններ իրականացնելու, մարդկանց ձերբակալելու կամ կալանավորելու իրավասություններ:

DCAF Geneva Centre
for Security Sector
Governance

www.dcaf.ch

**DCAF – Անվտանգության ոլորտի կառավարման
Ժնևյան կենտրոն**

Յուժեն-Ռիգո փողոց 2E

Փոստարկղ 1360 CH-1211 Ժնև 1